ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

8 մայիսի 2015 թվականի **թիվ 5** քաղ. Մոսկվա

Պետական սահմանի ղրղզա-ղազախական հատվածով տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների նկատմամբ մաքսային հսկողության վերացման մասին

«Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագրի 6-րդ հոդվածին համապատասխան՝ հաշվի առնելով Ղրղզստանի Հանրապետության կողմից պետական սահմանի ղրղզա-ղազախական հատվածով տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների նկատմամբ մաքսային հսկողության վերացման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացումը եւ Ղրղզստանի Հանրապետությունում մաքսային հսկողության համակարգի գնահատումը՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը **որոշեց.**

1. Վերացնել մաքսային հսկողությունը պետական սահմանի ղրղզա-ղազախական հատվածում, ինչպես նաեւ օդանավակայաններում՝ Ղրղզստանի Հանրապետության եւ Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների միջեւ օդային հաղորդակցության դեպքում:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում «Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի

պայմանագրին միանալու վերաբերյալ» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**